# 54 Կօրհնենք Քեզ, Աստվա́ծ,

1. Կօրհնենք Քեզ, Աստվա́ծ,
Զի Փրկիչը եկավ,
Խաչին վրա մեռավ
Եվ վերն փառքով համբարձավ:

Ալելուիա́, մեր Փրկիչը,
Ալելուիա́, Ամեն,
Ալելուիա́, Քուկդ է փառքը,
Սրբե մեզ նորեն:

2. Կօրհնենք Քեզ, Աստված,
Զի Հոգիդ ալ իջավ,
Մեզ Փրկիչը յայտնեց,
Եվ խավարն անցավ:

3. Միշտ փառք և գովեստ
Տանք զոհուած Գառնուկին,
Որ մեր մեղքը ջնջեց
Ու ներեց դարձողին:

4. Միշտ փառք և գովեստ
Շնորհաց Աստծուն,
Որ սիրեց մեզ, փնտրեց
Ու տվավ Իր Որդւոյն:

5. Ո́հ, մեզ արթընցուր
Եվ Հոգւովդ նորոգէ,
Ամէն սիրտ երկնաւոր
Եռանդովըդ վառէ:

6. Ո́հ, մեզ արթընցուր,
Մեռյալներս ողջընցուր,
Հիսուսի ձայնն լսենք,
Որ կըսէ. «Ինձ եկուր»: